# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 01

## ԱՐԱՐԱՏ ՌԱՖԻԿԻ ԱՐԱՐԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 17-րդ կետով , 18,05,2006թ-ի թիվ 731-Ն որոշմամբ,

որոշում եմ

1. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի 25 փողոց 12 հասցեում գտնվող քաղ. Արարատ Ռաֆիկի Արարատյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական 04092020-10-0004/ հողամասում ինքնակամ կառուցված 33,39 քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կետը համարել օրինական:
2. Ընդունել ի գիտություն,որ կառույցներ պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպերտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների համար սահմանված 36729/33,39X1100/ դրամ գումարը ենթակա է վճարման՝ սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում: Նշված գումարը չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4, Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 02

### <<ԶԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՀՈԱԿ_Ի ՀԵՏ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով <<Զառիթափի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված 2021 թ-ի պահպանման ծախսերի նախահաշիվն ու ելնելով համայնքի կարիքների համար գյուղատնտեսական, ջրագծերի, ճանապարհների սպասարկման, աղբահանման, սանիտարական մաքրման և այլաշխատանքների իրականացման անհրաժեշտությունից
Առաջնորդվելով <<Տիմ>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով. <<ՀՀ բյուջետայինհամակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետի դ/ ենթակետով և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի դրույթներով. Որոշում եմ՝

1. <<Զառիթափի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի հետ կնքել դրամաշնորհի հատկացման և աշխատանքների կատարման պայմանագրեր:
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4637 <<Ընթացիկ դրամաշնորհներ՝ պետական և համայնքերի ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով 37520000 /երեսունյոթ միլիոն հինգ հարյուր քսան հազար/ դրամ փոխանցել ՀՈԱԿ-ի համապատասխան բանկային հաշվին՝ համայնքի կարիքների համար անհրաժեշտ գյուղատնտեսական, ջրագծերի նու ճանապարհների սպասարկման և այլ աշխատանքների ու ՀՈԱԿ-ի պահպանության ծախսերի իրականացման նպատակով:
3. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 05 բաժնի 01 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 4637 <<Ընթացիկ դրամաշնորհներ՝ պետական և համայնքերի ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով 5088000 /հինգ միլիոն ութսունութ հազար/ դրամ, իսկ տնտեսագիտական դասակարգման 4655 << Կապիտալ դրամաշնորհներ՝ պետական և համայնքերի ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով 25000000 /քսանհինգ միլիոն/ դրամ փոխանցել ՀՈԱԿ-ի համապատասխան բանկային հաշվին՝ համայնքի կարիքների

համար անհրաժեշտ աղբահանման, սանիտարական մաքրման, բարեկարգման և այլ աշխատանքների ու ՀՈԱԿ-ի պահպանության ծախսերի իրականացման, ինչպես նաև ՀՈԱԿ- ի համար տրանսպորտային սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:

4. Հանձնարարել <<Ձառիթափի բարեկարգում>>ՀՈԱԿ-ին աշախատանքների իրականացումից հետո Ձառիթափի համայնքապետարանին ներկայացնելու կատարված աշխատանքների և ծախսերի մասին սահմանված ձևի հաշվետվություններ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 03

<<ԶԱՌԻԹԱՓԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>> ՆՈՒՀ ՀՈԱԿ ՀԵՏ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Զառիթափի համայնքի ՆՈՒՀ  ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված 2021 թ-ի պահպանման ծախսերի նախահաշիվն ու ելնելով համայնքի կարիքների համար նախադպրոցական կրթության աշատանքների  իրականացման անհրաժեշտությունից Առաջնորդվելով <<Տիմ>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետի դ/ ենթակետով և ՀՀ Քաղաքացիական օրիենսգրքի 436-րդ հոդվածի դրույթներով.  Որոշում եմ՝

1. <<Զառիթափի համայնքի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի հետ կնքել դրամաշնորհի հատկացման և աշխատանքների կատարման  պայմանագիր:
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09 բաժնի 01 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման  4637 <<Ընթացիկ դրամաշնորհներ՝ պետական և համայնքերի ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով 27035200 /քսանյոթ միլիոն երեսունհինգ հազար երկու հարյուր/ դրամ, իսկ տնտեսագիտական դասակարգման 4655 <<Կապիտալ դրամաշնորհներ՝ պետական և համայնքերի ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով 590000 /հինգ հարյուր իննսուն հազար/ դրամ փախանցել ՀՈԱԿ-ի համապատասխան բանկային հաշվին՝ համայնքի կարիքների համար անհրաժեշտ նախադպրոցական կրթության աշխատանքների ու ՀՈԱԿ-ի պահպանության ծախսերի իրականացման, ինչպես նաև ՀՈԱԿ-ի համար վարչական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:
3.Հանձնարարել <<Զառիթափ համայնքի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ին աշխատանքերի իրականացումից հետո Զառիթափի համայնքապետարանին ներկայացնելու կատարված աշխատանքների և ծախսերի մասին սահմանված ձևի հաշվետվություններ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 04

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետը. Որոշում եմ՝

1. Սահմանել Զառիթափ համայնքի 2021 թ. բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման եռամսյակային համամասնությունները՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

Հավելված թիվ 1
« 27 » « 01 » 2021թ.
թիվ 04 որոշման

Հաստատում եմ. Չառիթափ համայնքի ղեկավար

Ս. Բաբայան------------------------------------

Կ.Տ.

# Չառիթափ համայնքի

## Եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնություններ

2021 թվականի եկամուտները /հազ. դրամ/

| | Տարեկան | I | II | III | IV |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը եկամուտներ | 430755,4 | 81197,4 | 77911,2 | 77911,1 | 77911,4 |
| Հողի հարկ / անշարժ գույքի հարկ/ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի համար | 10580,0 | 2645,0 | 2645,0 | 2645,0 | 2645,0 |
| Գույքահարկ / անշարժ գույքի հարկ / շենքերի, շինությունների համար | 1000,0 | 250,0 | 250,0 | 250,0 | 250,0 |
| Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 15520,0 | 3880,0 | 3880,0 | 3880,0 | 3880,0 |
| Տեղական տուրքեր | 840,0 | 210,0 | 210,0 | 210,0 | 210,0 |
| Տեղական վճարներ | 4300,0 | 1075,0 | 1075,0 | 1075,0 | 1075,0 |
| Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 134994,5 | 33748,6 | 33748,6 | 33748,6 | 33748,7 |
| Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 2400,0 | 600,0 | 600,0 | 600,0 | 600,0 |
| Համահարթեցման դոտացիա | 132224,7 | 33056,1 | 33056,2 | 33056,1 | 33056,3 |
| Այլ դոտացիա | 1285,6 | 321,4 | 321,4 | 321,4 | 321,4 |
| Այլ եկամուտներ | 8500,0 | 2125,0 | 2125,0 | 2125,0 | 2125,0 |
| Կապիտալ սուբվենցիա | 3286,3 | 3286,3 | | | |
| Վարչական մնացորդ | 10522,6 | | | | |
| Ֆոնդային մնացորդ | 105301,7 | | | | |

2021 թվականի ծախսերը /հազ. դրամ/

| | Տարեկան | I | II | III | IV |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը ծախսեր | 430755,4 | 120239,1 | 147950,0 | 86450,0 | 82116,3 |
| Համայնքապետարան | 130300,0 | 34700,0 | 35500,0 | 30150,0 | 29950,0 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 27501,1 | 15251,1 | 10950,0 | 1150,0 | 150,0 |
| Ջրամատակարարում | 55200,0 | 4486,3 | 54000,0 | 0 | 0 |
| Մշակութային այլ կազմակերպություններ | 7700,0 | 3850,0 | 850,0 | 3000,0 | 0 |
| Փողոցների լուսավորում | 5566,3 | 2100,0 | 1200,0 | 1200,0 | 1066,3 |
| Նախադպրոցական կրթություն | 28600,0 | 7600,0 | 7000,0 | 7000,0 | 7000,0 |
| Գյուղատնտեսություն | 77801,7 | 48551,7 | 9750,0 | 9750,0 | 9750,0 |
| Աղբահանում | 32000,0 | 1750,0 | 26750,0 | 1750,0 | 1750,0 |
| Սոցիալական հատուկ արտոնություններ | 7800,0 | 1950,0 | 1950,0 | 1950,0 | 1950,0 |
| Պահուստային ֆոնդ | 61000,0 | 0 | 0 | 30500,0 | 30500,0 |
| Տնտեսական հարաբերություններ | - 6000,0 | | | | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 05

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ,ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի պահանջներով, և հիմք ընդունելով Զառիթափ համայնքի ավագանու 22.12.2020թ.-ի թիվ 55-Ա որոշումը, ***որոշում եմ՝***

Համայնքի բյուջեից ներքոհիշյալ զոհված, վիրավորված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին հատկացնել միանվագ դրամական օգնություն՝ յուրաքանչյուրին հետևյալ չափերով.

1. Զառիթափ բնակավայրից զոհված՝ Հովիկ Սմբատի Մուրադյանի ընտանիքին - 200000 /երկու հարյուր հազար/ դրամ
2.Զառիթափ բնակավայրից զոհված՝ Էդիկ Գագիկի Սարգսյանի ընտանիքին - 200000 /երկու հարյուր հազար/ դրամ

3. Բարձրունի բնակավայրից զոհված՝ Անդրանիկ Արմենի Գևորգյանի ընտանիքին - 200000 /երկու հարյուր հազար/ դրամ

4. Զառիթափ բնակավայրից անհայտ կորած՝ Հովհաննես Մխիթարի Սողոմոնյանի ընտանիքին - 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ
5. Բարձրունի բնակավայրից անհայտ կորած Սամվել Սուրիկի Միքայելյանի ընտանիքին -100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**